

131): Յիշեալ պարգեւատրութեանց յիշատակօք լի են մեր բոլոր հին մենաստանաց արձանագիրները: Մսեղիեաց առատ պաշար կը գոյանար նաեւ մատաղներէ, զորս պիտի տեսնենք իրենց կարգին:

Քաւական չէր որ կրօնաստանք ունէին այդ անշարժ ու շարժուն ստացուածքները, այլ վանականք իսկ կը զբաղէին անձամբ անոնց հոգաբարձութեամբ, ինչպէս ըսինք: Ի հնուց ծանօթ են անոնց մէջ «տեսուչք եզանց հոգազործաց կամ խաշանց արօտականաց եւ հօտից կթոց եւ գրաստուց բեռնակրաց» (Յճխ. 214): Տեսուչք կամ վերին հսկողներ՝ դեռ հանդուրժելի են. բայց Շնորհալին կը բողոքէր՝ տեսնելով մեր վանականներն անձամբ իսկ «այգեգործ իւրաքանչիւր ոք լինելով» (Ընդհ. 16), եւ անոր հետ իւր ձայնը կը միացնէր Լամբրոնացին եւս նոյն անարժան գրադանաց դէմ (Պտր. 416):

Հիմայ կրնանք հարցնել. ինչպէս կըրնային հաշտուիլ այդ փարթամութիւնն ու վանական ժուժկալութիւնը. ինչպէս կարելի էր անասուն դարմանել եւ անոնց միսը չուտել. գինի պատրաստել անձամբ, կամ դրսէն վանք կրել գրաստներով (Կիր. 114), եւ անոր հետ թշնամի ապրիլ. այս